ՄԵՋ ԱԿԱԴԵՄԻԱ Է ՊԵՏՔ, ԹԵ՞Ղ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն անգամ, երբ քննադատություն է հնչում ԳԱԱ-ի հասցեին, անմիջապես ալիք է բարձրանում. ամեն գնով պահպանել ակադեմիան, պահպանել ակադեմիան, պահպանել ակադեմիան... Գիտության մասին՝ ոչ մի բառ: Միգուցե դա ախտորոշո՞ւմ է:

Ցավոք, Գիտությունների ակադեմիան վերջին տասնհինգ տարիներին վերածվեց անղեկ ու անառագաստ նավի: Նրա գործունեության գերակայություններն այդպես էլ չձեւակերպվեցին:

Եթե ակադեմիայի համար անհասկանալի է, թե ինչ է պետք անել, ապա գուցե արժեր մի որոշ ժամանակ քայլել «լայն ճակատով», մինչեւ որ ի հայտ գային գերակա ուղղությունները: Բայց իրականում ծրագրերը տրվում են ոչ թե նախագծերի եւ հեռանկարների, այլ ազդեցիկ ակադեմիկոսների, բյուրոկրատական կառուցվածքի, կոնկրետ խմբավորումների շահերին ծառայելու համար: Ակադեմիան դարձել է ներքին խժդժությունների ասպարեզ, ակադեմիական կլանների պայքարի վայր, որոնց շահերը չափազանց հեռու են որեւէ գիտական գործունեությունից:

Շարունակությունը՝ էջ 5

Էջ 1-ից

ՄԵԶ ԱԿԱԴԵՄԻԱ՞Է ՊԵՏՔ, ԹԵ՞ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դրույթն այն մասին, թե ակադեմիայի պահպանումը վերջին 15 տարիների դաժան պայմաններում ինքնին արդեն իսկ մեծ նվաճում է, ճիշտ չէ: Գիտությունների ակադեմիան իր եւ հիմնարար հետազոտությունների համար տեղ չգտավ նոր Հայաստանում: Իսկ առանց դրա նրա գոյությունն անիմաստ է:

Չենք խոսում արդեն այն մասին, որ մեր ակադեմիական ինստիտուտների տեխնիկական հագեցվածությունը քարե դարի մակարդակի վրա է: Ժամանակակից գիտատեխնիկական սարքավորում ձեռք բերելու համար պահանջվում են տասնյակ ու հարյուր միլիոնավոր դոլարներ, ինչն անիրագործելի է տեսանելի ապագայում:

Ակադեմիայում տեղի ունեցավ «տարիքային աղետ». ըստ էության, զրկվեց 30-50-ամյա տարիքի գիտաշխատողների սերնդից: Դրա հետեւանքով տարիներ շարունակ ակադեմիան միայն գեներալներից ու շարքայիններից բաղկացած բանակ էր, բայց առանց սպաների: Հատկապես ցավալի է կրտսեր սպաների բացակայությունը: Այդպիսի բանակը մարտունակ չէ:

Առանձնակի ողբերգական է այն հանգամանքը, որ ակադեմիական ինստիտուտները զրկվում են նաեւ շարքայիններից: Արդյունքում՝ առանց այդ էլ փոքր գիտական ներուժը մարում է: Երիտասարդություն չկա:

Ակադեմիայի ղեկավարությունը չի իրազեկում նախագահին, կառավարությանն ու հասարակությանը հայրենի գիտության մեջ տիրող ճգնաժամային վիճակի մասին, գունազարդում է պատկերը, թաքնվում ինչ-որ արհեստական հաշվետվությունների հետեւում, ամեն ինչ պատճառաբանում միայն անբավարար ֆինանսավորմամբ:

Ընկել է գիտության հեղինակությունն ընդհանրապես եւ ակադեմիայի անդամներինը՝ մասնավորապես: Ակադեմիայի անդամները չափազանց մեծաթիվ են, նրանցից շատերը գիտությամբ չզբաղվող բյուրոկրատներ են: Գուցե նույնիսկ մեզանում անհամեմատ ավելի շատ կան անդամության արժանի գիտնականներ, բայց գիտությամբ լրջորեն զբաղվող ակադեմիկոսները ներկայիս ակադեմիայում հատուկենտ են:

Ձեւավորվել է վտանգավոր միտում. գիտական աշխատանքն արդեն գլխավոր հիմքը չէ ակադեմիայի անդամ ընտրելիս: Եթե այսպես շարունակվի, ապա շուտով ականատես կլինենք ակադեմիկոսների ոչ թե ընտրության, այլ նշանակումների:

Ակադեմիան ձեռքից բաց թողեց ԲՈՀ-ը. կեղծ գիտնականներն այսօր ահռելի քանակ են կազմում: Պաշտպանվում են արդեն տպագրված օտարերկրյա հետազոտություններից արտագրած թեկնածուականներ ու դոկտորականներ: Գիտությունների թեկնածուի դիպլոմը երիտասարդների համար դարձել է բանակից խուսափելու միջոց եւ այն աստիճան արժեզրկվել, որ շուտով հնարավոր կլինի գնել տոնավաճառներում:

Գործերի նման ընթացքի դեպքում շատ շուտով մեր երկրում, առանց չափազանցության, գիտական կարող է դառնալ յուրաքանչյուրը: Եւ դառնում է:

Քայքայվեցին նաեւ այն սակավաթիվ գիտական դպրոցները, որոնք գոյություն ունեին խորհրդային տարիներին, արտասահման տեղափոխվեցին բազմաթիվ տաղանդավոր գիտնականներ: Բայց էլ ավելի վատ է այն, որ հայրենի գիտությունն անհուսալիորեն ու ընդմիշտ հետ է մնացել. մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, գիտական այլ ոլորտներում ի հայտ եկած բազմաթիվ ուղղությունների մասին մեզանում պարզապես չնչին պատկերացում իսկ չունեն:

Հայ գիտնականների զեկույցների բացակայությունը համաշխարհային ամենախոշոր ու հեղինակավոր կոնգրեսներում, սիմպոզիումներում եւ գիտաժողովներում համարվում է ինքնըստինքյան հասկանալի երեւույթ:

Այնպիսի տպավորություն է, թե ակադեմիայի ղեկավարությունը չունի գործողությունների հստակ ծրագիր, իսկ ակադեմիական գիտական հանրությանը կրծքով պաշտպանելու ամպագոռգոռ խոստումները մնում են լոկ խոստումներ: Գիտությունը կերտվում է ինստիտուտներում, լաբորատորիաներում ու գիտարշավներում, այլ ոչ թե ակադեմիայի միջանցքներում, եւ պաշտպանության կարիք ունեն նրանք, ովքեր իսկապես կերտում են գիտությունը, այլ ոչ թե բացարձակ ապիկար ակադեմիկոսները:

Ակադեմիան ամենեւին հոգ չի տանում գիտության ժողովրդականացման մասին: Չկան գիտահանրամատչելի ամսագրեր, գիտահանրամատչելի ֆիլմեր, դպրոցականների համար գիտության վերաբերյալ գրականություն եւ այլն:

Վերոթվարկյալից (իսկ նշեցինք խնդիրների միայն մի մասը) կարելի էր հերթապահ եզրահանգում անել, թե հայրենի Գիտությունների ակադեմիային հարկավոր են արմատական փոփոխություններ: Սակայն հարցը կարելի է դնել նաեւ այլ կերպ. իսկ ընդհանրապես պե՞տք է մեզ գիտությունների ակադեմիա:

ԿԱՐԵՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ